



# ՀԱՉԱՐ ՈՒ ՄԻ ԳԻՇԵՐ

Հեքիաթների ամբողջական  
ժողովածու

Գիրք Գ

Ալի Բաբայի, քառասուն  
ավազակների և ստրկուհի  
Մարջանի պատմությունը



# ՀԱՉԱՐ ՈՒ ՄԻ ԳԻՇԵՐ

Հեքիաթների ամբողջական ժողովածու

Գիրք Գ

Ալի-Բարայի, քառասուն  
ավազակների և ստրկուհի  
Մարջանի պատմությունը

Թարգմանիչ Լիլիթ Մկրտչյան  
Երևան, 2026թ.

NovusLiber

Yerevan, 2026

ՀՏԴ 398.21  
ԳՄԴ 82.3(5)-442  
Հ 140

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9385-1-6 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9385-0-9 (տպագիր)

ISBN 978-9939-9385-0-9



# ՀԱՉԱՐ ՈՒ ՄԻ ԳԻՇԵՐ

Հեքիաթների ամբողջական ժողովածու

Գիրք Գ

## Ալի-Բաբայի, քառասուն ավազակների և ստրկուհի Մարջանի պատմությունը

«Ալի Բաբան և քառասուն ավազակները» արևելյան ժողովրդական հեքիաթ է, որը մտնում է «Հազար ու մի գիշեր» պատմությունների ժողովածուի մեջ:

Պատմությունը ներկայացնում է աղքատ փայտահատ Ալի Բաբային, որը պատահաբար բացահայտում է ավազակների գաղտնի գանձարանը և իմանում կախարդական խոսքը՝ «Սիմսիմ, դուռը բաց»: Սակայն անսպասելի հարստությունը նրան կանգնեցնում է նոր փորձությունների առաջ. ազահությունը, խաբեությունը և մշտական վտանգը սպառնում են ոչ միայն նրան, այլև նրա ընտանիքին:

Հեքիաթը համադրում է արկածային լարված սյուժեն, արևելյան պատկերավոր պատմողականությունը և ժողովրդական իմաստությունը՝ բացահայտելով մարդկային բնույթի հակասությունները: Այն ներկայացնում է խելքի, քաջության և հավատարմության հաղթանակը ազահության ու նախանձի նկատմամբ՝ միաժամանակ պահպանելով դասական հեքիաթային մթնոլորտը և իր արդիական հնչեղությունը:

## Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ [info@novusliber.com](mailto:info@novusliber.com) հասցեով:

## Թարգմանչի նախաբան

«Հազար և մի գիշեր» հեքիաթների աշխարհը վաղուց արդեն դարձել է համաշխարհային գրականության ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործություններից մեկը:

Այս պատմությունները դարեր շարունակ հիացրել են ընթերցողներին իրենց երևակայական հարստությամբ, արկածներով, կախարդական դեպքերով և մարդկային խառնվածքների բազմազանությամբ: Սակայն այս ժողովածուն միայն հեքիաթների շարք չէ: Այն նաև մի յուրահատուկ պատուհան է միջնադարյան արևելյան աշխարհի մշակույթի, առևտրի, քաղաքային կյանքի և մտածողության մեջ:

Հաճախ ընթերցողները «Հազար ու մի գիշեր»-ը պատկերացնում են որպես մեկ հեղինակի ստեղծագործություն, սակայն իրականում դա այդպեսին չէ: Այս ժողովածուն ձևավորվել է դարերի ընթացքում և ներառում է տարբեր ժողովուրդների՝ պարսկական, հնդկական, արաբական և ավելի ուշ շրջանի այլ աղբյուրներից եկած պատմություններ: Գրքի ամենահին միջուկը կապված է պարսկական «Հազար հեքիաթ» (*Հասյար աֆսանա*) անունով ժողովածուի հետ, որը հետագայում արաբերեն թարգմանվել և աստիճանաբար լրացվել է նոր պատմություններով: Այդ պատմություններից շատերը ձևավորվել են Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում՝ հատկապես Բաղդադի մշակութային միջավայրում, երբ քաղաքը միջնադարյան աշխարհի խոշորագույն տնտեսական և մտավոր կենտրոններից էր:

Ժողովածուն Եվրոպայում լայն ճանաչում ստացել է 18-րդ դարի սկզբին ֆրանսիացի արևելագետ և թարգմանիչ **Անտուան Գալանի** շնորհիվ: Նա 1704–1717 թվականներին հրատարակեց

արաբերեն ձեռագրերից կատարած ֆրանսերեն թարգմանությունը՝ *Les Mille et une nuits* («Յազար ու մի գիշեր») անվամբ: Սակայն Գալանը իր հրատարակության մեջ ներառեց նաև մի շարք պատմություններ, որոնք արաբական ձեռագրերում չկային: Դրանցից ամենահայտնիներն են «Ալա ադ Դինի հրաշագործ կանթեղը» և «Ալի Բաբան ու քառասուն ավազակները»: Այս պատմությունները նա լսել էր սիրիացի պատմող **Ջաննա Դիաբից** և գրականորեն մշակելով՝ ներառել էր իր հրատարակության մեջ: Այդ պատճառով այսօր հայտնի «Յազար ու մի գիշեր»-ը մասամբ կազմված է իսկական միջնադարյան արաբական պատմություններից, մասամբ էլ եվրոպական գրական մշակման արդյունք է:

Այս հեքիաթները ընթերցելիս երբեմն կարելի է հանդիպել այնպիսի երևույթների, որոնք առաջին հայացքից հակասում են իսլամական օրենքներին կամ սովորույթներին: Օրինակ՝ պատմություններում հաճախ հիշատակվում են գինու խնջույքների կամ հարբեցողության մասին, մինչդեռ իսլամական օրենքը գինին արգելում է: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ, որ միջնադարյան իրական կյանքում արքունիքային և քաղաքային մշակույթը միշտ չէ, որ ամբողջությամբ համապատասխանում էր կրոնական կանոններին: Բաղդադի խալիֆաների պալատներում և պարսկական արքունիքներում գինու խնջույքները հայտնի երևույթ էին, և դրանք հաճախ արտացոլվում էին նաև գրականության մեջ: Բացի այդ, «Յազար ու մի գիշեր»-ի պատմությունների մեծ մասը կրում է պարսկական մշակույթի ազդեցությունը, որտեղ գինին հաճախ հանդես է գալիս նաև որպես բանաստեղծական և խորհրդանշական պատկեր: Նման պատկերներ հանդիպում են նաև պարսիկ մեծ բանաստեղծ Օմար Խայամի ստեղծագործություններում, որտեղ գինին երբեմն ներկայացվում է որպես կյանքի վայելքի կամ փիլիսոփայական խորհրդածության խորհրդանիշ:

Մյուս հարցը, որը երբեմն զարմացնում է ընթերցողներին, վերաբերում է կանանց ունեցվածքին: Հեքիաթներում հաճախ հանդիպում ենք հարուստ կանանց, որոնք ունեն այգիներ, խանութներ, ծառաներ կամ մեծ դրամական միջոցներ, որովհետև իրականում իսլամական իրավունքը կանանց թույլ էր տալիս ունենալ սեփականություն: Կինը կարող էր ժառանգել, գնել կամ վաճառել ունեցվածք, զբաղվել առևտրով, և այդ ունեցվածքը նույնիսկ ամուսնությունից հետո մնում էր նրա անձնական սեփականությունը, այսինքն կինը ինչ-ինչ պատճառներով կարող էր նաև բաժանվել ամուսնուց: Պատմականորեն հայտնի է, օրինակ, որ մարգարե Մուհամմեդի առաջին կինը՝ *խադիջա բինթ խուվայիդը*, մեծահարուստ վաճառական էր և առևտրական գործեր էր վարում: Այդ պատճառով «Հազար ու մի գիշեր»-ում հարուստ կանանց մասին հիշատակությունները լիովին համապատասխանում են միջնադարյան իրականությանը:

Հեքիաթների մեջ արտացոլված է նաև միջնադարյան արևելյան աշխարհի զարգացած տնտեսական կյանքը: Շատ պատմություններում հերոսները վաճառականներ են, որոնք ճանապարհորդում են Հնդկաստան, Չինաստան, Աֆրիկայի ափեր, Պարսկաստան կամ Սիրիա՝ առևտրի նպատակով: Այդ ժամանակաշրջանում արաբական և պարսկական վաճառականները վերահսկում էին Հնդկական օվկիանոսի առևտրական ուղիները: Հեքիաթներում հաճախ հիշատակվող մետաքսը, համեմունքները, մարգարիտները, թանկարժեք քարերը և այլ ապրանքները իրականում միջնադարյան միջազգային առևտրի կարևոր բաղադրիչներ էին:

Բացի այդ, իրական աշխարհում արդեն գոյություն ունեին զարգացած ֆինանսական համակարգեր: Առևտրականները հաճախ ճանապարհ էին գնում ներդրված կամ փոխառված կապիտալով: Գոյություն ունեին առևտրային գործընկերության ձևեր, որոնցից մեկը հայտնի էր որպես **քիրադ** կամ **մուդարաբա**:

Այս համակարգով մեկ մարդ տրամադրում էր կապիտալը, իսկ մյուսը ճանապարհորդում էր և առևտրով զբաղվում, հետո շահույթը բաժանվում էր կողմերի միջև: Այդ ժամանակաշրջանում օգտագործվում էին նաև գրավոր վճարման փաստաթղթեր, որոնք կոչվում էին **սաքք (sakk)**: Այս փաստաթղթերը թույլ էին տալիս վաճառականներին գումար ստանալ տարբեր քաղաքներում՝ առանց դրամը ֆիզիկապես տեղափոխելու: Հետագայում հենց այս բառից է առաջացել եվրոպական «չեք» բառը:

Շուվային առևտրի վտանգավորության պատճառով հաճախ մի քանի վաճառական միասին էին ներդրում անում մեկ նավի մեջ՝ բաժանելով ռիսկը: Այս մեխանիզմը հիշեցնում է ժամանակակից ապահովագրության կամ բաժնետիրական ներդրման սկզբունքները:

«Հազար ու մի գիշեր»-ի պատմություններում հաճախ հանդիպում ենք ոչ միայն թագավորների և իշխանների, այլ նաև վաճառականների, արհեստավորների, խանութպանների և նավաստիների: Սա ցույց է տալիս, որ միջնադարյան Բաղդադում գոյություն ունեւ բավականին ուժեղ քաղաքային միջին խավ, և այդ հասարակական միջավայրը լայնորեն արտացոլված է հեքիաթների մեջ:

Այսպիսով «Հազար ու մի գիշեր»-ը միայն հեքիաթների ժողովածու չէ: Այն միաժամանակ ներկայացնում է միջնադարյան արևելյան քաղաքակրթության կյանքի բազմազուն պատկերը՝ իր առևտրով, ճանապարհորդություններով, խնջույքներով, առեղծվածներով և մարդկային բնավորությունների բազմազանությամբ:

Թարգմանելիս նպատակս եղել է հնարավորինս պահպանել այս պատմությունների կենդանի և գունեղ բնույթը՝ միաժամանակ հայ ընթերցողին փոխանցելով դրանց մշակութային և պատմական խորությունը:

## **Բովանդակություն**

Ալի-Բարայի և քառասուն ավազակների պատմությունը, մաս 1 .....	13
Ալի-Բարայի, և քառասուն ավազակների պատմությունը, մաս 2 .....	40
Ալի-Բարայի և քառասուն ավազակների պատմությունը, մաս 3 .....	72
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	108



Այի Բարայի, քառասուն ավազակների և  
ստրկուհի Մարջանի պատմությունը...

# Այի-Բաբայի և քառասուն ավագակների պատմությունը, մաս 1

Պատմում են, ո՛վ բախտավոր արքա, հինավուրց ավանդույթների և վաղուց անցած սերունդների հիշատակարաններից մեկում, իսկ Արարիչը բոլորից ավելի գիտակ է հենց անընկալելի ու անբացատրելի գաղտնիքների մեջ, որ անցած դարերի վաղ ժամանակներում, Պարսկական Խորասանի<sup>[1]</sup> քաղաքներից մեկում, ապրում էին երկու հարագատ եղբայրներ: Նրանցից մեկի անունը Քասիմ էր, իսկ մյուսինը՝ Այի Բաբա:

Այդ քաղաքը առևտրով ու ճանապարհորդներով աշխույժ վայր էր. այնտեղ էին գալիս հեռավոր երկրներից վաճառականներ, բերում էին մետաքս, համեմունքներ և այլ թանկարժեք ապրանքներ, իսկ շուկաները միշտ աղմկում էին մարդկանց ձայներից ու առևտրականների կանչերից:

Այդ քաղաքում էր ապրում նաև երկու եղբայրների հայրը:

Սակայն երբ, Արարչի կամքով, մարդը մի օր մահացավ, նա իր որդիներին թողեց միայն չնչին ժառանգություն և խղճուկ ունեցվածք: Եղբայրները բաժանեցին այն քիչը, ինչ հայրը թողել էր իրենց, թեև իրականում բաժանելու բան էլ գրեթե չկար: Նրանք, այնուամենայնիվ, ամեն ինչ արեցին օրենքով և արդարությամբ՝ առանց վեճի ու անհաշտության, որովհետև երկուսն էլ ցանկանում էին պահպանել եղբայրական խաղաղությունը և

չթշնամանալ միմյանց հետ հարստության համար, որը հազիվ թե արժեր այդպիսի վեճի:

Ժառանգությունը բաժանելուց հետո Քասիմը ամուսնացավ մի հարուստ կնոջ հետ, որը ուներ հողեր, պտղատու և խաղողի այգիներ, ինչպես նաև խանութներ՝ լի բազմապիսի ապրանքներով ու անթիվ-անհամար թանկարժեք իրերով:<sup>[2]</sup> Այդ խանութներում կային մետաքսներ, համեմունքներ, բուրավետ յուղեր և հեռավոր երկրներից բերված զանազան ապրանքներ, որոնք միշտ գրավում էին գնորդների ուշադրությունը:

Քասիմը սկսեց առևտրով զբաղվել՝ առք ու վաճառք անել, տալ ու առնել, և օրեցօր ավելի հաջողակ դարձավ իր գործերում: Նրա ապրանքները գնում էին քաղաքացիներն ու վաճառականները, նրա հետ գործարք էին անում մեծահարուստ մարդիկ, և շուտով նրա անունը հայտնի դարձավ շուկաներում ու առևտրականների շրջանում: Բախտը ժպտում էր նրան, և նրա հարստությունը գնալով բազմապատկվեց, նա մեծ հոչակ ձեռք բերեց իր նման վաճառականների մեջ ու կարևոր հեղինակություն ունեցող մարդու համբավ վաստակեց պատվավոր ու հարուստ մարդկանց աչքում:

Ինչ վերաբերում է Ալի Բաբային, ապա նա ամուսնացավ մի աղքատ կնոջ հետ, որը չուներ ոչ մի դինար ու ոչ մի դիրհեմ, ոչ տուն, ոչ էլ կահկարասի: Ալի Բաբան կարճ ժամանակում ծախսեց այն ամենը, ինչ ժառանգել էր հորից, և դրանից հետո ընկավ դառը կարիքի մեջ: Աղքատությունը՝ իր հոգսերով ու դժվարություններով, դարձավ նրա մշտական ուղեկիցը:

Թեև Ալի Բաբան շնորհքով ու խելացի մարդ էր, նա հաճախ նստում էր մտքերի մեջ խորասուզված և չէր հասկանում, թե ինչու

Էր իրեն նման դառը ճակատագիր բաժին ընկել: Նա երկար խորհում էր՝ ինչ անել, որպեսզի դուրս գար իր վիճակից: Բայց որքան էլ մտածում էր, ոչ մի հնար չէր գտնում, որով կարողանար արժանապատիվ ապրուստի միջոց ձեռք բերել և նույնիսկ բավարար հաց վաստակել իր ընտանիքի համար:

Եվ հաճախ նա մտածում էր, թե որքան տարօրինակ է մարդկային բախտը. մի եղբորը հարստություն է տալիս, իսկ մյուսին՝ կարիք ու փորձություններ:

Եվ մի օր, հոգսից վշտաբեկ ու ծանրացած սրտով ու իր ճակատագրի դառնությունից վհատված, Ալի Բաբան նստեց մենակ և, երկար մտածելով իր վիճակի մասին, այսպիսի խոսքեր արտասանեց.

*Մարդիկ ինձ ասում են.*

*«Միտքդ պայծառ է լիսյուննի պես,*

*Ինչ խելոք մարդ ես, ամեն բան գիտես»:*

*Բայց գովասանքից փախչում եմ ես.*

*Ի՞նչ օգուտ խելքից, թե՛ սոված կքնես:*

*Ասում են՝ գրքերն են իրապես գանձ.*

*Բայց թե ուզենամ գրավ դնել դրանք:*

*Մի ֆելյա էլ չեն տա գրքերիս դիմաց,*

*Միայն հայհոյանք, ծաղր ու հեզնանք:*

*Բախտը մերժում է ինձ օր ու գիշեր,*

*Աղբատը չունի նրբագեղ ճաշակ,*

*Տունս մութ է, սեղանս՝ դատարկ,*

*Օջախս մարած է ամառ ու ձմեռ:*

*Աղքատի կյանքը դառն է ու վիատ.  
Անտեր շներն էլ կհաչան վրադ,  
Դռները փակվում են խոժոռ հայացքով,  
Աղքատը մնում է գլխիկոր հառաչով:*

*Մարդիկ աղքատին չեն ներում ոչինչ,  
Աղքատին ոչ մի մխիթարանք չկա,  
Մնում է սպասել այն վերջին շնչին,  
Որից հետո վերադարձ չկա:*

Եվ այս խոսքերն ասելուց հետո Ալի Բաբան նստեց լուռ ու երկար խորհեց իր վիճակի մասին՝ փորձելով մի ճար գտնել, մի հնար մտածել, որի վրա կարողանար հենվել իր գործերում, հասկանալ, թե ինչպես ապրի այդուհետև և որտեղից ձեռք բերի իր ընտանիքի ապրուստը:

Եվ վերջապես նա ինքն իրեն այսպես ասաց.

«Եթե իմ մնացած դիրհեմներով մի կացին ու մի քանի ավանակ գնեմ, բարձրանամ սարերը, այնտեղ փայտ կտրեմ, հետո բերեմ քաղաք և շուկայում վաճառեմ, գուցե կարողանամ այնքան վաստակել, որ թեթևացնեմ իմ հոգսերը և հոգամ ընտանիքիս կարիքները»:

Այս մտքից ոգևորված՝ նա գնաց շուկա, գնեց մի կացին ու երեք ավանակ, որոնցից յուրաքանչյուրը գրեթե ջորու չափ մեծ էր, և հաջորդ առավոտ նրանց հետ բարձրացավ սարերը:

Ալի Բաբան ամբողջ օրը փայտ կտրեց: Նա թափված ճյուղեր ու չորացած կոճղեր հավաքեց, կապոցներ արեց ու շարեց իր

կողքին, իսկ երբ արևը թեքվեց դեպի մայրամուտ և սարերի լանջերը սկսեցին մթնել, նա կապոցները բարձեց իր ավանակների մեջքին, սարերից իջավ քաղաք ու մտավ շուկա:

Այնտեղ նա վաճառեց իր հավաքած փայտը և ստացած փողը ծախսեց իր ընտանիքի կարիքները հոգալու վրա: Եվ այդ փոքրիկ հաջողությունից նրա վիշտը մի քիչ փարատվեց, հոգին հանգստացավ: Նա սրտապնդվեց ու փառաբանեց Արարչին:

Այդ գիշեր Ալի Բաբան անցկացրեց գոհ ու հանգիստ սրտով: Իսկ երբ առավոտը բացվեց, նա նորից վեր կացավ, թամբեց իր ավանակներին, սրեց կացինը ու կրկին բարձրացավ սարերը:

Այսպես այդ գործը դարձավ նրա արհեստն ու ապրուստի միջոցը: Ամեն առավոտ նա գնում էր սարերը, ամբողջ օրը փայտ էր կտրում, իսկ երեկոյան վերադառնում էր քաղաքային շուկա և այնտեղ վաճառում իր հավաքած փայտը՝ այդպես վաստակելով իր ընտանիքի համեստ ապրուստը:

Այսպես Ալի Բաբան ապրեց որոշ ժամանակ:

Մինչև մի օր, երբ նա սարերում փայտ էր կտրում, հանկարծ նկատեց, որ լեռան լանջերից մեկի տակ փոշու մեծ ամպ բարձրացավ: Փոշին այնքան խիտ էր, որ թվում էր, թե շուտով կծածկի ամբողջ երկինքը և մոտենում էր դեպի այն ծառերը, որտեղ նա աշխատում էր:

Երբ փոշին մի փոքր ցրվեց, Ալի Բաբան տեսավ, որ մի խումբ հեծյալներ են մոտենում իր ուղղությամբ՝ վայրագ ու ահարկու տեսքով, որսի ելած առյուծների նման: Նրանք ոտքից գլուխ զինված էին ու զրահապատ: Նրանց լանջագոտիներից կախված էին սրեր ու ծանր գուրգեր, թամբերի մոտ ամրացված էին

նիզակներ, իսկ ուսերից կախված էին հզոր աղեղներ ու նետերով լի կապարճներ:

Այի Բաբան սարսափից կարկամեց: Նա անմիջապես հասկացավ, որ դրանք ավազակներ են: Չցանկանալով նրանց աչքին երևալ՝ նա շտապ բարձրացավ մոտակա մեծ ծառի վրա և թաքնվեց դրա խիտ ճյուղերի ու տերևների մեջ: Իսկ հեծյալները մոտեցան ու կանգ առան նրանից ոչ հեռու:

Երբ նա ավելի ուշադիր նայեց նրանց, արդեն լրիվ համոզվեց, որ իր կասկածը ճիշտ էր: Այի Բաբան հաշվեց հեծյալներին ու տեսավ, որ նրանք քառասուն հոգի էին, և նրանցից յուրաքանչյուրը նստած էր ընտիր նժույգի վրա: Դրանք ուժեղ ու արագաշարժ ձիեր էին, որոնք սովոր էին երկար ճանապարհների և վտանգավոր արշավների:

Այի Բաբայի վախը ավելի մեծացավ: Նրա բերանը չորացավ, և նա կարկամած չգիտեր՝ ինչ աներ: Նա լուռ նստած էր ծառի վրա և անգամ չէր համարձակվում շնչել, որ իր ներկայությունը չմատներ:

Այդ ժամանակ հեծյալները կանգ առան ժայռի մոտ և իջան իրենց ձիերից: Նրանք իրենց նժույգների վզին կախեցին գարիով լի տոպրակներ, որպեսզի կենդանիները կերակրվեն, իսկ հետո յուրաքանչյուրը վերցրեց իր ձիու մեջքին կապված ծանր պարկը և դրեց իր ուսին:

Իսկ Այի Բաբան ծառի ճյուղերի մեջ թաքնված՝ լուռ հետևում էր նրանց ամեն շարժմանը:

Այդ ժամանակ հեծյալների առաջնորդը առաջ գնաց և մոտեցավ ժայռի լանջին: Նա ձեռքերով մի կողմ տարավ թփերի խիտ ճյուղերը, և նրանց տակից երևաց մի փոքրիկ պողպատե

դուռ: Այդ դուռը այնքան լավ էր ծածկված փշոտ թփերով ու խիտ մոլախոտով, որ դրսից նայողի համար գրեթե անհնար էր նկատել այն:

Այի Բաբան մինչ այդ երբեք չէր էլ կասկածել, որ այդ ժայռի մեջ նման դուռ կար:

Երբ բոլոր ավազակները եկան ու կանգնեցին դռան առաջ, նրանց առաջնորդը առաջ քայլեց, կանգ առավ պողպատե դռան դիմաց ու բարձրաձայն գոչեց.

«Սիմսի՛ն, դուռը բաց արա՛»:

Եվ հենց որ նա արտասանեց այդ խոսքերը, դուռը ծանր դնգոցով բացվեց:

Առաջնորդը ներս մտավ, իսկ նրա հետևից՝ բոլոր ավազակները՝ ուսերին դրված ծանր պարկերով:

Այի Բաբան զարմանքով հետևում էր այդ ամենին: Նա նկատեց, որ այդ պարկերը ծանրությունից կախվել էին ավազակների ուսերից, և նրան թվաց, թե դրանց մեջ սպիտակ արծաթի ու դեղին, դրոշմված ոսկու ձուլակտորներ կային:

Եվ հենց այդպես էլ կար: Այդ ավազակները ճանապարհներին թալանում էին մարդկանց ու ճամփորդներին, հարձակվում էին գյուղերի ու քաղաքների վրա, իսկ իրենց զավթած ավարը բերում էին այդ մեկուսի ու գաղտնի վայրը պահելու:

Այի Բաբան ծառի վրա նստած էր լուռ ու անշարժ՝ աչքը չկտրելով տեսածից: Նա նույնիսկ չէր համարձակվում շարժվել, որպեսզի պատահմամբ որևէ ձայն չհաներ:

Որոշ ժամանակ անց նա տեսավ, որ ավազակները դուրս են գալիս քարանձավից ու բոլորի պարկերը դատարկ էին: Նրանք

կրկին կապեցին պարկերը ձիերի թամբերին, նստեցին իրենց նժույզների վրա ու գնացին այն ուղղությամբ, որտեղից եկել էին:

Երբ նրանք վերջապես հեռացան և աչքից կորան, Ալի Բաբան դեռ մի պահ նստած մնաց ծառի վրա՝ համոզվելու համար, որ ոչ ոք չի վերադառնա:

Միայն դրանից հետո նա զգուշությամբ իջավ ծառից:

Նա մոտեցավ այն փոքրիկ պողպատե դռանը և վախվորած գննելով այն՝ կանգնեց դռան առաջ: Նրա սիրտը ուժգին բաբախում էր, որովհետև նա զգում էր, որ կանգնած էր մի մեծ գաղտնիքի շեմին:

Այդ ժամանակ նա ինքն իրեն այսպես ասաց.

«Իսկ եթե ես էլ ասեմ. «Միմսիմ, դուռը բաց արա»,<sup>[3]</sup> ինչպես ասաց ավազակների առաջնորդը, արդյո՞ք դուռը կբացվի ինձ համար»:

Եվ նա մոտեցավ դռանը, արտասանեց այդ խոսքերը, ու դուռը բացվեց: Իսկ պատճառն այն էր, որ այդ վայրը ստեղծվել էր անհնազանդ ջինների կողմից. այն կախարդված էր և պաշտպանված հզոր թալիսմաններով, իսկ «Միմսիմ, դուռը բաց արա» բառերը այն գաղտնեբառերն էին, որոնցով հանվում էր դուռը փակ պահող մոգական արգելքը և դուռը բացվում էր:

Երբ Ալի Բաբան տեսավ, որ դուռը բացվել է, նա ներս մտավ: Բայց հազիվ էր անցել շեմով, երբ դուռը նրա հետևից նորից փակվեց: Ալի Բաբան վախեցավ ու սարսափեց: Եվ հուսահատությունից արտասանեց այն խոսքերը, որոնք ամոթ չէ ասել որևէ մարդու.

«Չկա գորություն և ուժ, բացի Մեծն ու Բարձրյալ Արարչից»:

Այնուհետև նա հիշեց ավագակների առաջնորդի ասած խոսքերը՝ «Սիմսիմ, դուռը բաց արա», և նրա վախն ու սարսափը ցրվեցին:

«Ինչո՞ւ անհանգստանամ, որ դուռը փակվել է, – ասաց նա ինքն իրեն, – եթե ես գիտեմ այն գաղտնի խոսքը, որով կարելի է նորից բացել այն»:

Այսպես ասելով՝ նա մի փոքր առաջ գնաց: Նա կարծում էր, թե այդ տեղը մուշ ու մռայլ մի վայր կլինի: Սակայն չափազանց զարմացավ, երբ տեսավ, որ կանգնած է մի ընդարձակ ու լուսավոր սրահում, որի պատերը կառուցված էին սպիտակ մարմարից, իսկ առաստաղը պահող բարձր կամարները փայլում էին ճրագների մեղմ լույսի տակ:

Այդ սրահը կարծես արթայական հյուրասիրության համար պատրաստված լիներ, որովհետև այնտեղ կային ամեն տեսակ կերակուրներ ու ըմպելիքներ, որոնց տեսքը հաճելի էր աչքին և որոնց բույրը շատ ախորժաբեր էր շնչելիս:

Մեծ սեղաններին շարված բազմապիսի արծաթյա սկուտեղների վրա դրված էին խորոված գառներ ու ճարպոտ թռչուններ, համեմված գաֆրանով և անուշահոտ խոտերով: Այնտեղ կային լցոնած աղավնիներ, մեղրով ու ընկույզով ամոքված կերակուրներ, նաև բրնձով ու համեմունքներով պատրաստված ուտեստներ, որոնցից գոլորշի էր բարձրանում՝ ախորժաբեր բույր տարածելով շուրջը:

Կային նաև պղնձե և ոսկեզօծ ամաններ, որոնք լի էին ամեն տեսակի մրգերով. հասած նուռներով, որոնց հատիկները փայլում էին ինչպես կարմիր քարեր, խաղողի ծանր ողկույզներով, թուզով

ու խուրմայով, ինչպես նաև նուշով, պիստակով և այլ համեղ պտուղներով:

Մյուս սեղանների վրա դրված էին շաքարապատ քաղցրավենիքներ և մեղրով պատրաստված նրբախորտիկներ, որոնց կողքին կային բյուրեղյա սափորներ՝ լցված նռան հյուլթով, խաղողի քաղցր գինիով ու վարդաջրով, որի բույրը լցնում էր ամբողջ սրահը:

Այդ ամենը դրված էր այնպիսի առատությամբ, որ թվում էր՝ այդ սրահը պատրաստված է եղել ոչ թե մի քանի մարդկանց, այլ մի ամբողջ արքունիքի համար: Եվ ով էլ ներս մտներ այնտեղ, կարող էր ուտել ու խմել այնքան, որքան ցանկանար, որովհետև այդ ուտելիքներն ու ընպելիքները երբեք չէին պակասում:

Եվ Ալի Բաբան՝ տեսնելով այդ ամենը, մեծապես զարմացավ ու մտածեց, որ նույնիսկ մեծահարուստ վաճառականների կամ թագավորների տներում հազիվ թե կարելի լիներ տեսնել այդպիսի առատություն:

Այդտեղից նա անցավ մեկ ուրիշ սրահ, որն ավելի մեծ ու ընդարձակ էր, քան առաջինը: Եվ երբ նա ներս մտավ այնտեղ, աչքերը շլացան այն փայլից, որը լուսավորում էր ամբողջ սրահը:

Այդտեղ կուտակված էին ոսկուց ու արծաթից սարքված անթիվ գանձեր: Պատերի երկայնքով ու սրահի մեջտեղում բարձրանում էին մաքուր ոսկու ձուլակտորների հսկայական կույտեր, որոնք փայլում էին ինչպես արևը կեսօրին: Դրանց կողքին կային արծաթի մեծ ձուլակտորներ՝ սառը լուսավոր փայլով, ինչպես լուսնի լույսը խաղաղ գիշերով:

Այնտեղ կային նաև ծանր պարկեր՝ լցված դինարներով ու լիարժեք դիրհեմներով: Երբեմն այդ պարկերը բացված էին, և

ուսկե ու արծաթե դրամները թափված էին կուլտերով, ինչպես ավազը գետի ափին կամ խիճը անապատի ճանապարհներին: Որքան էլ մարդ փորձեր հաշվել այդ հարստությունը, միևնույնն է, չէր կարողանա հասնել վերջին:

Այդ սրահում կային նաև ոսկե ու արծաթե սպասքներ՝ մեծ թասեր, գավաթներ, սափորներ ու սկուտեղներ, որոնց վրա փորագրված էին որսի տեսարաններ, ծառեր, թռչուններ և ծաղկազարդ նախշեր: Որոշ գավաթներ զարդարված էին թանկարժեք քարերով, իսկ մյուսները պատրաստված էին այնքան նուրբ վարպետությամբ, որ թվում էր, թե դրանք ստեղծված են ոչ թե մարդու ձեռքով, այլ կախարդանքի միջոցով:

Այնտեղ կային նաև թագեր, գոտիներ և մարմնի զարդեր, որոնք փայլում էին ճրագների լույսի տակ և հազարավոր շողեր արձակում: Ոսկու փայլը խառնվում էր արծաթի լուսավորությանը, և ամբողջ սրահը կարծես միաժամանակ լցված էր արևի և լուսնի լույսով:

Եվ Այի Բաբան կանգնած էր այդ հարստության մեջ՝ ապշահար ու շշմած, որովհետև նրան թվում էր, թե ինքը մտել է ոչ թե ավազակների պահեստ, այլ մի թագավորի գանձարանը, որտեղ կուտակված են աշխարհի բոլոր երկրներից բերված գանձերը:

Եվ Այի Բաբան՝ շրջելով այդ զարմանալի սրահում, նկատեց ևս մեկ դուռ և անցավ երրորդ սրահը, որն ավելի գեղեցիկ ու շքեղ էր, քան երկրորդը: Այնտեղ կուտակված էին աշխարհի ամենահեռավոր երկրներից բերված գործվածքներն ու հանդերձները՝ այնպիսիք, որոնց տեսքից աչքը հմայվում էր և լեզուն չէր կարողանում նկարագրել դրանց գեղեցկությունը:

Կային Սիրիայի երկրներից բերված դամասկոսյան մետաքսներ՝ հյուսված ոսկեթելերով և զարդարված նուրբ բուսական նախշերով, որոնց փայլը հիշեցնում էր առավոտյան ցողի մեջ փայլող ծաղիկները: Կային Բաղդադի և Պարսկաստանի վարպետների գործած ծանր բրոկատներ,<sup>[4]</sup> որոնց վրա ոսկու և արծաթի թելերով, բարձրադիր նախշերով ասեղնագործված Էին որսի տեսարաններ, այգիներ ու տարաշխարհիկ թռչուններ:

Այնտեղ կային նաև Չինաստանի հեռավոր երկրներից բերված նուրբ մետաքսներ՝ այնքան թեթև, որ թվում էր, թե դրանք հյուսված են քամուց կամ լուսնի շողերից: Դրանք փայլում էին ինչպես ջրի վրա ընկած արևի լույսը և շրշում էին մեղմորեն, երբ նա ձեռքով դիպչում էր դրանց:

Այնտեղ կային Սինդի և Յնդկաստանի երկրներից բերված բարակ բամբակյա և մուսլինե գործվածքներ՝ ներկված գաֆրանագույն, կապույտ և բոսորագույն ներկերով: Այդ գործվածքներն այնքան նուրբ էին, որ ամբողջ զգեստը կարելի էր անցկացնել մատանու միջով:

Կային Նուբիայի երկրներից բերված ծանր ու փայլուն կերպասներ, որոնց ոսկեգույն երանգը հիշեցնում էր անապատի ավազը մայրամուտի ժամանակ: Կային նաև Քաշմիրի փափուկ շալեր, որոնց բուրդը այնքան նուրբ էր, որ ձեռքերին թվում էր՝ թե դիպչում են ամպին:

Այդ բոլոր գործվածքները կուտակված էին մեծ կապոցներով և հսկայական դարակների վրա, այնպես որ թվում էր՝ աշխարհի բոլոր թագավորների գանձարաններից հավաքված հարստությունը մի տեղ էր բերվել: Եվ եթե որևէ մարդ ցանկանար այնտեղից հագուստ ընտրել, կարող էր գտնել այնպիսի հանդերձ,

որը վայել էր թե՛ արքային, թե՛ վեզիրին, թե՛ հարուստ վաճառականին:

Այդ սրահից Ալի Բաբան անցավ մի ուրիշ դռնով և մտավ երրորդ սրահը, որն ավելի հրաշալի էր, քան նախորդները: Եվ հենց որ նա ներս մտավ այնտեղ, աչքերը շլացան այն փայլից, որը լուսավորում էր ամբողջ սրահը, որովհետև այն լի էր թանկարժեք քարերով ու զարդերով, որոնց փայլը շողշողում էր ամբողջ գանձարանի կամարակապ առաստաղի վրա: Այնտեղ կային մարգարիտների հսկայական կույտեր՝ սպիտակ ու կլոր, ինչպես ցողի կաթիլները լուսնի լույսի տակ: Դրանց կողքին փայլում էին կարմիր հակինթներ ու ռուբիններ՝ կրակի պես բոցավառ գույնով, իսկ կանաչ զմրուխտները շողում էին ինչպես զարնան առաջին խոտը:

Այնտեղ կային նաև կապույտ փիրուզներ, որոնց գույնը հիշեցնում էր պարզ երկինքը, և դեղին տոպագներ, որոնք փայլում էին ինչպես արևի շողերը առավոտյան: Մարջանների կարմիր ճյուղերը դրված էին մարգարիտների կողքին, իսկ եփված շաքարի գույնի քաղբեղոններն ու սարդիոնները լուսարձակում էին մեղմ կարմրավուն շողերով:

Որոշ տեղերում այդ քարերը լցված էին մեծ արկղերի մեջ, իսկ այլ տեղերում թափված էին ամբողջ կույտերով՝ ինչպես ավազը անապատում: Այնտեղ կային նաև թագեր, մատանիներ, վզնոցներ ու ապարանջաններ՝ զարդարված այդ քարերով, այնպես որ թվում էր, թե աշխարհի բոլոր արքաների գանձերը հավաքվել են այդ մեկ վայրում:

Երբ Ալի Բաբան տեսավ այդ անհամար գանձերը, նրա միտքը շլացավ, և նա երկար ժամանակ կանգնած մնաց զարմացած՝